

ԴԱՐՉՎԱԾՔԸ ՈՐՂԵՍ ԵՐԳԻԾԱՆՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՄԻՋՈՑ
Պ. Գ. ՎՈՒԴՅԱՌԷԻ ՍՏԵՂՈՍԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հայտնի է, որ դարձվածքները ոճական հարուստ լիցքեր կրող միավորներ են և օժտված են խոսքը հյութեղ ու պատկերավոր դարձնելու ուրույն հատկություններով: Իսկ ոճական այս հնարավորությունները, ի թիվս այլ հանգամանքների, մեծապես պայմանավորված են մաև նրանով, որ դարձվածքների մի ստվար հատվածի հիմքում որպես ոճական դարձույթ ընկած է երգիծանքը: Ուստի զարմանալի չէ, որ Վուդհաուզի՝ մեծ երգիծաբան գրողի ստեղծագործություններում լայնորեն գործածված են դարձվածքները: Այսպես օրինակ՝ *all flesh is grass, swallowing a fish bone the wrong way, beer coming out of a bottle, chasing a cat up a tree, dynamite of the soul, a bull-pup chasing a bee* և այլ դարձվածքներ, որ ինքնին սրամիտ արտահայտություններ են խոսքին հաղորդում են երգիծական երանգներ՝ տպավորիչ բնութագրելով որևէ իրավիճակ կամ գնահատողական վերաբերմունք արտահայտելով որևէ մեկի նկատմամբ:

Բերված բոլոր դարձվածքները համդիպում են Վուդհաուզի տարբեր ստեղծագործություններում: Գրողը, դրանք նպատակադիր գործածելով, իրականացնում է ոճական զանազան խնդիրներ:

Հայտնի դարձվածքների դիպուկ գործածությունը հնարավորություն է տալիս սեղծ ձևով տպավորիչ պատկերներ ստեղծելու: Վուդհաուզը հաճախ է դիմում այդ միջոցին՝ գործող անձանց այս կամ այն հատկանիշը ներկայացնելու համար:

Վուդհաուզի ստեղծած տպավորիչ երգիծական կերպարներից է հորաքույր Դահիլան, ով իր մասին մեծ կարծիք ունեցող, իրեն ամենագետի տեղ ղնող և վերացական դատողություններ անող մարդ է, ահա թե ինչպես է գրողը նկարագրում հորաքրոջը *Mrs Thomas Portarlington Travers of Brinkley Court, Market Snodsbury, near Droitwich – or, putting it another way, my good and deserving Aunt Dahlia, she is a woman with whom it is always a privilege to chew the fat* (4,1). Մի ուրիշ դեպքում՝ իր գեղեցկուհու (ում հեղինակը նկարագրում է. *She was about five feet six; she had a ton and a half of red-gold hair, grey eyes, and one of those determined chins.*) համար իրեն կոտորող, նրա բոլոր քմահաճույքները կատարող, բայց այդ բոլորը անտաշ ու կոպիտ ձևերով անող Բոբի մասին խոսելիս հեղինակը մեջբերում է մեկ այլ դարձվածք՝ *to smash oneself up at polo* (6,28).

Բոքի այս պահվածքը ամեն անգամ կնոջը տեսնելիս միշտ ծիծաղելի տպավորություն է թողնում շրջապատի վրա, և հեղինակը նրան այդ իրավիճակներում նմանեցնում է a bull-pup chasing a cat up a tree, որը ևս երգիծական դարձվածք է (6,28):

Ինչպես տեսնում ենք, կերպարները ոչ միայն տպավորիչ դարձնելուն, այլև նրանց երգիծական լույսի տակ ներկայացնելուն էապես նպաստում են տեղին ու դիպուկ գործածված դարձվածքները: Վերը նշված դարձվածքների մի մասն էլ գործածվում են իրավիճակի երգիծականությունը ցույց տալու համար: Այսպես՝ Տիկին Վիքենը՝ բարձրաշխարհիկ մի կին, ում Վուսթերը ֆարիամարիանքով է վերաբերում, զանգում է վերջինիս և հեկեկալով խոսում է հետը: Վուսթերը զարմացած է, որ այդ տիկինը զանգահարել է իրեն: Չէ՞ որ նրանց վատ հարաբերությունները հայտնի են բոլորին և այնքան ակնհայտ, որ այդ հանգամանքը կարող են չնկատել միայն գետնի տակ բնակվող առնետները (rat of the underworld) (Վուսթերի բնորոշմամբ) (4,7): Տիկնոջ տգեղ հեկեկանքը տհաճություն է պատճառում Վուսթերին և այնպիսի զգացողություն առաջ բերում, կարծես թե swallowing a fish bone the wrong way (4,7).

Իրավիճակը ամբողջովին կատակերգական է. և՛ զանգի փաստը ինքնին, և տիկնոջ հեկեկալով խոսելը, և տրված հարցը՝ ճիշտ է այն, ինչ ինքը թերթում կարդացել է, և Վուսթերի հարցը չհասկանալը, և՛ այն, որ այդ հանգամանքը ամբողջովին հունից հանում է տիկին Վիքենմին, և վերջինս սկսում է հիստերիկ ծիծաղել և ուշաթափվում է: Լսափողը վերցնում է տիկնոջ սպասավորը և ասում, որ տիկինը այլևս չի կարող խոսել: Վուսթերը մնում է անհայտության մեջ՝ «առանց հետագա տեղեկությունների ռազմաճակատից» (without further bulletins from the front) (2,7). Ինչպես տեսնում ենք, դիպուկ գործածված դարձվածքները մի կողմից լավ են բնութագրում տիկին Վիքենմին, մյուս կողմից տպավորիչ արտահայտում են Վուսթերի վերաբերմունքը նրա հանդեպ: Եվ այդ վերաբերմունքի արտահայտմանը նպաստում են մի դեպքում այն երգիծական բովանդակությունը, որ արտահայտված է դարձվածքներում, մյուս դեպքում տիկնոջը համապատասխանող բառերը՝ առնետ, ռազմաճակատ (տիկինը հայտնի է իր կուլարար բնավորությամբ, չնչին բաներից մեծ աղմուկ հանելու սովորությամբ)՝ իրենց ոչ թե բառային իմաստներով, այլ դարձվածքների կազմում ձեռք բերած վերաիմաստավորմամբ:

Իսկ ի՞նչ է եղել իրականում. թերթում հայտարարություն է տպվել Բերթրամ Վուսթերի և Ռոբերտայի նշանադրության մասին, ինչն էլ հոգեկան անհավասարակշիռ վիճակի է հասցրել տիկին Վուսթերին:

Նման գործառույթ է կատարում նաև beer coming out of a bottle (4,23) տպավորիչ դարձվածքը, որով հեղինակը բնորոշում է Փոփ Գլոսեպին՝ նկատի

ունենալով թե նրա արտաքինը (*His eyes were round, his nose wiggled*), թե շարժումները, յուրահատուկ քրքիջը (*Pop Glossop gurgling*).

Դարձվածքը լավ է պատշաճում նաև պատմվածքում նկարագրված ընդհանուր մթնոլորտին. ամառային տաք ու հաճելի եղանակ է:

Մի այլ դեպքում արտառոց ճարպիկ, դժվար իրավիճակներից միշտ ելք գտնող Բիքիին հեղինակը բնորոշում է որպես *a bull-terrier chasing a cat up a tree* (5,19). Բիքիի հետ Վուսթերը ծանոթացել էր Նյու-Յորքում և մտերմացել, քանի որ նա էլ իր նման նոր էր Անգլիայից եկել ԱՄՆ: Վուսթերին դուր է եկել նրա ուժեղ ու ամենակարող լինելը, սակայն հետագայում պարզվել է, որ վերջինս աղքատ, մի կերպ ծայրը ծայրին հասցնող մարդ է, որ անհամբեր սպասում է ամսվա վերջին քեռու (քեռին հարուստ մի դուքս է) ուղարկած փողին: Ընդ որում, քեռին նույնպես անտեղյակ է Բիքիի իրական վիճակից: Բիքին քեռուն նույնպես խաբել է, թե ինքը բիզնեսմեն է, և փողը իրեն պետք է ոչ թե գոյատևելու, այլ բիզնեսի համար: Բայց ահա քեռին գալիս է, և ճշմարտությունը կբացահայտվի: Ջիվսը՝ Վուսթերի ծառան, ում նույնպես դուր է գալիս Բիքին, առաջարկում է տեղափոխվել Վուսթերի տուն, որ քեռուն խաբեն, իբր թե այդ տունն ու ունեցվածքը Բիքիին է: Վուսթերն էլ համաձայնվում է: Բիքին իր տեսակի մեջ միակը չէ: Նա հիշեցնում է գրասենյակներում աշխատանքի փորձ ունեցող այն մարդկանց, ովքեր կարողանում են դատարկ ու տզեղ բուսերի աչքը մտնել *catching the boss's eye and what-not* (5,25). Դարձվածքին հավելած *what-not* արտահայտությունը դարձվածքը դարձնում է տարրողունակ՝ նրանով բնութագրելով ոչ միայն Բեքիին ու իր նմաններին, այլև ի ցույց դնելով բուսերի անգրագիտությունը:

Դարձվածքների առումով գրողի վարպետությունը բնորոշվում է ոչ միայն դարձվածքների՝ որպես անբողջական կամ մասամբ վերահմաստավորված բառույթներից կազմված կայուն կապակցությունների դիպուկ գործածությամբ (2,8), այլև հայտնի դարձվածքները ձևափոխելու և իրավիճակին հարմարեցնելու միջոցով դարձվածքների արտահայտչականությունը մեծացնելու հմտությամբ: Դրա եղանակներից մեկը վերը նկարագրված երևույթն է՝ դարձվածքի հավելում (1,16):

Մեկ այլ եղանակ է դարձվածքի շարադասության փոփոխությունը (1,101):

Անգլերենում կա *to turn one's hand to* դարձվածքը (6,28): Բոլոր երբևէ որևէ բանով չի զբաղվել: Նրա կատարած միակ էական քայլը թերևս ամուսնությունն է մի կնոջ հետ, ով, ի գարմանս իրեն, աշխատում է: Վերջինիս ու նրա կնոջ հակադրությունը տպավորիչ գույներով նկարագրելու համար Բոբի անգործությունը բնութագրելիս հեղինակը չի բավարարվում դարձվածքի սուսկական մեջբերումով, այլ սաստկացնում է՝ դարձվածքի ներիմաստը դրան տալով *to do a hand's turn in one's life* տեսքը:

Կամ *the iron hand in the velvet glove* դարձվածքը, որը նշանակում է *a very firm intension hidden under a gentle appearance*, հեղինակի բերված օրինակում ստանում է *... the velvet hand beneath the iron glove* տեսքը:

Վուդհաուզի ստեղծագործությունները լի են դարձվածքների անսովոր, նոր կիրառություններով, որոնք խոսում են գրողի անհատական լեզվամտածողության մասին: Համատեքստի թելադրանքով գրողը ստեղծում է նոր դարձվածքներ կրճատելով կամ ընդարձակելով դրանք, որոնք նպաստում են բովանդակության սաստկացմանը, դարձվածքին հաղորդում են ինքնատիպություն: Յուրահատուկ դարձվածքները նպաստում են լիարժեք կերպարի ստեղծմանը, կերպարի տիպականացմանը:

Երգիծանքի արտահայտման մի եղանակ է նաև ակնհայտ դրական արտահայտության գործածությունը ոչ դրական իմաստով: Սա վերաբերում է նաև դարձվածքին: Այս կամ այն հերոսի նկատմամբ հեզմանք արտահայտելու համար, որը թաքցված, բացասական բնույթ ունեցող սուբյեկտիվ-արժեքային եղանակավորման միջոցով է իրականացվում (3,9), գրողը իր կամ մեկ այլ գործող անձի անունից նրա վերաբերյալ որևէ դրական ներիմաստ ունեցող դարձվածք է գործածում: Վերջինս, ուղիղ հակադրություն լինելով տվյալ հերոսի իրական եությանը, տվյալ դեպքում ձեռք է բերում հեզմական գունավորում: Այսպես՝ Բոբին բացարձակապես որևէ դրական հատկանիշ չունեցող մի անձնավորություն, ում բոլորը «հիմար» են կոչում, կինը համարում է *the greatest thing on the earth* (6.29): Կամ՝ Բեքիի քեռին, բացահայտելով վերջինիս իրական վիճակը, զայրանում է և որոշում այլևս փող չուղարկել նրան: Բեքին ստորաքարշորեն խնդրում է քեռուն հրաժարվել այդ մտքից՝ ինքն իր մասին գոռոճածելով *to be pretty solidly in the soup* դարձվածքը (5,27):

Ըստ եության դրական բովանդակություն ունի նաև *a penny saved is a penny earned* դարձվածքը (4,1): Սակայն քանի որ Վուսթերի հորաքրոջ համար այս մտածելակերպը կյանքի նպատակ է դարձել այն աստիճան, որ հորաքույր Դահիլան պատրաստ է մի քանի գրոշ ձեռք բերելու համար հանդիպումներ ունենալ բոլորի կողմից վատ համբավ ունեցող Ափլոնի հետ, որի անունը միայն հեզմական մակդիրների հետ է հանդես գալիս Վուսթերի դատողություններում (*formidable loony-doctor*). շահագիտական նպատակներով ակտիվորեն մասնակցել հասարակական կյանքին և այլն, դարձվածքը ձեռք է բերել չափազանցության արժեք, ինչն էլ նրան տալիս է բացասական ներիմաստ և երգիծական բովանդակություն:

I saw her point – *a penny saved is a penny earned* and all that sort of thing – but I continued surprised. It amazed me that Aunt Dahlia, presumably a free agent, should have selected this very *formidable loony-doctor* to chew the mid-day chop with.

Վուդհաուզի կողմից դարձվածքների օգտագործման ինքնատիպ հնարքներից է տարրալուծումը, երբ դարձվածքների բաղադրիչները հեռանում են միմյանցից: Այսպես, օրինակ՝ “I don’t think I have ever seen a dog who conveyed more vividly the impression of being rooted to the spot and prepared to stay there till the cows – or, in this case, his proprietress – come home.”

Գեղինակը այս միջոցին է դիմում դարձվածքի իմաստը ավելի սաստկացնելու և իրավիճակը ավելի տպավորիչ նկարագրելու համար:

Նպաստելով գեղարվեստական խոսքի պատկերավորմանն ու արտահայտչականությանը՝ նորակազմ դարձվածքը ավելի է ուժեղացնում տիրող տրամադրությունը, խտացնում ասելիքի բովանդակությունը:

Դարձվածքների գործածության ինքնատիպ եղանակներից է նաև դարձվածքի բաղադրիչներից մեկի փոխարինումը մեկ այլ բառով:

I was sorry to have to insert a spanner in her hopes and dreams.

Անգլերենում ունենք Spanner in the works դարձվածքը, որը նշանակում է – a cause of confusion or ruin to a plan or operation. Տվյալ օրինակում to insert a spanner in her hopes and dreams գրողը փոխարինելով works բառը hopes and dreams բառերով ավելի տպավորիչ է նկարագրում իր հերոսի հոգեվիճակն ու տրամադրությունը, այն, որ ձախողվել են ոչ միայն նրա պլանները, այլ նաև փշրվել են հույսերն ու երազանքները:

Դարձվածքների ձևափոխության մի այլ տարատեսակ է ընդարձակումը և հիմնականում դրանով է պայմանավորված դարձվածքների մի մասի արտահայտչականությունը: Օրինակ

I ground a tooth or two and waved the arms in a passionate gesture.

I raised an eyebrow or two. (4,17)

Այս օրինակներում grind one’s teeth նշանակում է to rub teeth harshly together, իսկ to raise one’s eyebrows – to show surprise.

Սակայն հեղինակի նպատակն է ավելի ընդգծել իր հերոսի անտարբերությունն այն ամենի հանդեպ ինչը չսպիից շատ է նյարդայնացնում նրան:

Այս օրինակներում դարձվածքները ձեռք են բերում նոր գունդերանգներ և խոսքն օժտում են առանձնահատուկ արտահայտչականությամբ:

Գեղարվեստական գրականության լեզուն պարարտ հող է նաև բոլորովին նոր՝ հեղինակային դարձվածքների ստեղծման համար: Կոնկրետ հանգամանքների, հարաբերությունների թելադրանքով ստեղծված դարձվածքները ստեղծվում և մնում են միայն խոսքային մակարդակում, որպես նոր դարձվածային միավորներ որևէ համալեզվական նշանակություն չեն ունենում, քանի որ իմաստավոր են միայն տվյալ համատեքստում: Սակայն այս դարձվածքները ոճական առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում՝ որպես մտքի

ծևակերպման ինքնատիպ արտահայտչամիջոցներ: Կոնկրետ իրավիճակը հակիրճ ու դիպուկ բնութագրելու նպատակով գրողը ստեղծել է նոր դարձվածքները to give his back teeth for, keep your pores open, որոնք խոսքը դարձնում են ավելի ինքնատիպ (4, 18):

Վերը նշված օրինակներից երևում է, որ Վուդհաուզը հաճախ է դիմում դարձվածքներին՝ հերոսների հոգեբանությունը, մտածական, զգայական աշխարհը նկարագրելիս: Նման դեպքերում դարձվածքների ոճական արժեքը ավելի է ընդգծվում ու ակնառու դառնում:

Ինչպես տեսնում ենք, դարձվածքները կատարում են գործող անձանց հարաբերությունների վերհանման, կերպարի կամ իրավիճակի երգիծական բնութագրման գործառույթներ:

Անշուշտ, գեղարվեստական ստեղծագործության մեջ նման գործառույթներ կարելի է իրականացնել նաև դիպուկ գործածված բառերով, ինքնաշեն փոխաբերություններով, համեմատություններով, բառախաղերով և այլ միջոցներով, որոնք նույնպես լայնորեն կիրառված են Վուդհաուզի ստեղծագործություններում: Սակայն վերը նշված միջոցների համեմատությամբ դարձվածքները ունեն ակնհայտ առավելություն. դա հանրորեն ծանոթ լինելու հանգամանքն է: Վերջինս նպաստում է ոչ միայն խոսքի երգիծական երանգավորմանը, այլև դրա ժողովրդայնացմանը, ինչը միշտ էլ դրական հատկանիշ է գեղարվեստական գրականության, և հատկապես երգիծական ժանրով գրված ստեղծագործության լեզվի համար:

Օգտագործված գրականություն

1. Բեդիրյան Պ.Ս. «Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն»
2. Купчин А. В. "Фразеология современного английского языка", Москва, 1972
3. Походня С.И. "Языковые виды и средства реализации пролога", Киев, 1989
4. P.G. Woodhouse – "Jeeves in the Offing". London, 1960
5. P.G. Woodhouse – "Jeeves and the Hard-Boiled Egg", London, 1919
6. P.G. Woodhouse – "Absent Treatment", London, 1919